

Тем не менее всегда, когда идешь на новую постановку «Гамлета», заранее возникает во мне протестующее начало, и это потому, что ни разу ни на одной сцене я не встречал правильного толкования образа Гамлете. То это были абсолютные пессимисты-неврастеники, например Чехов, или мстительные, лукавые, самодовольные и утверждающие себя Гамлете вроде Горюнова в театре им. Вахтангова, таких примеров можно привести много.

Гамлете прогрессивного для своей эпохи, Гамлете борющегося со всем ханжеством и лицемерием двора, Гамлете умного, на много голов стоящего выше всех его окружающих, создали театр им. Сундукина и блестяще его исполняющий народный артист В. Вагаршян. Это самое передовое и самое правильное толкование образа Гамлете, какое мне когда-либо приходилось видеть, и сделано это на высоком актерском мастерстве.

Такое же высокое мастерство проявил режиссер Бурджалов. Во всей постановке четкость, скучность и скульптурность мизансцен, правильное использование сценической площадки, прекрасная расстановка массы, все это показывает высокую культуру режиссера и его большой вкус.

Мне радостно было видеть такой прекрасный спектакль.

Народный артист Арм. ССР
А. И. Бек-Назаров

ԵՎՐՈՓԱՐՆԵՐԻ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՓՈԼԻ
ԹԱՌԱՐԱՆԻ ԷԶԵՐՈՒՄ

Հաղորդում Մուշեղ Նարյանի

1912 թվականին բնիք գյուղմեցի Մարտիրոս Հարությունյանը, Բեռլինի համալսարանի ավարտեկուց հետո, Ալեքսանդրապոլում լուս է ընծայում մի ուշագրավ բանասիրական աշխատանք, որի լրիվ անունն է՝ «Բացատրական բառզիրք օտարազգի բառերի և օտարազիրք բառերի ու դարձվածքների», որոնք գործածական են հայոց գրականության մեջ։ Համեմատարար ընդարձակ բացատրությամբ փիլիսոփալական, տնտեսագիտական, հաւաքականական, իրավաբանական և կենսախոսական բառերի։ Ինչ խոսք, այս աշխատանքը, որը երկուուն, շուրջ 450 էջ է, ունի նաև օտար դարձվածքների բառարան, բնակչի կարելի համեմատել համանման մի այլ աշխատանքի՝ 2։ Տեր-Ղազարյանի «Հանրամատչելի բառարան օտարազգի բառերի և գործածության մեջ մտած մտքերի ու դարձվածքների» (Թիֆլիս, 1908) աշխատության հետ։ Եթե Տեր-Ղազարյանինը, ինչպես ինքը՝ «Աղի-

նակն է նշում, հանրամմատելի գործ է, ապա Հարությունյանցինը բանասիրական-մասնադիտական ժանրակշեռական պատճենը է: Մավալով և բաների ընդուրկմամբ և մեկնարանություններով զյումրեցի բանասերի աշխատանքը տառացիորեն մի բանի անդամ դերակշռում է նախորդին: Մեծ լեզվարան և բանարանագիր Ստիփանոս Մալխանյանցը այս բանարանը համարում է «ինամբով կազմված ընդարձակ և օգտակար աշխատովլուն» (Ստ. Մալխանյանց, Հայերեն բացատրական բառարան, հատոր առաջին, Երևան, 1944, Առաջարան, էջ ԺՊ):

Սպահիրույանցը իր բառարանում հազարավոր օտար բառերի, օտար հեղինակների (Հոմերոս, Ֆիրուզա, Շիլեր, Գյոթե) ու գրական հանրածանոթ կերպարների հետ տեղ է տվել նաև Ծեփսպիրի կերպարներից մի քանիսին:

Բառարանի համապատասխան էջերում Հարությունյանցը խոսում է Ծեփսպիրի զիմավոր կերպարների մասին, աչքի առաջ ունենալով երկու հանգամանք՝ այդ կերպարները, իրեն որոշակի գաղափարների ու գգացմունքների անձնավորումներ, արդեն դարձել էին ս.սույթիներ: Այդ կերպարների մասին նա զրում է այն չափով, ինչ չափով թույլ են տալիս օտար բառերի բառարանի սահմանները, քանի որ իր աշխատանքը օտար բառերի բառարան է և ոչ թե գրական բառերի (տերմինների) բառարան:

Ինչ խոսք, Ծեփսպիրի կերտած կերպարների թեկուզ և բառարանային մեկնարանությունը այսօր մեզ համար պակասավոր է: Սակայն ուրախալի է, որ բոն Հայաստանում 1912 թվականին լույս տեսած օտար բառերի բառարանում մենք գտնում ենք նաև Ծեփսպիրի այն կերպարները, որոնք համաշխարհային տարածում են գտել:

Ծեփսպիրյան կերպարներից բառարանի էջերում տեղ են գտել Յագոն (էջ 88), Համելետը (էջ 197), Ծելլոկը (էջ 262), Օթելլոն (էջ 383), Ֆալստաֆը (էջ 390): Ուշադրության արժանի են նաև մավր բառի մեկնարանությունը (էջ 225), քանի որ Օթելլոն մավր է, շեխափերովովա (էջ 263) բառի բացատրությունը և Համելետի «լինել, թե լինել» հոչակալով դարձվածքի զետեղամբ հանդերձ բնագրով օտար դարձվածքների հավելվածում (էջ 418) և պատշաճ ծանոթությունը:

Ինչ խոսք, շուրջ վեց տասնամյակ առաջ լույս տեսած այս բառարանի շեխափերյան էջերը կազմում են մի համեստ, բայց և ուշագրավ հատվածը մեր նախահեղափոխական շեփսպիրագիտության:

Ստորև ամբողջությամբ տալիս ենք այդ բառարանի համապատասխան հատվածները.

«Յագո. Ծեփսպիրի «Օթելլո» ողբերգությունից վերցրած անուն: Խորա-
մանկ միջոցներով նախանձ գրգուղ և ընտանեկան երջանկությունը
քայլքաղող» (էջ 88):

«Համելետ. Ծեփսպիրի համանուն ողբերգության հերոսը՝ միշտ խորհրդա-
ծող, թուլակամ, անվճռական մարդ» (էջ 197):

«Ծելլոկ. Ծելլոկ (Shylock). Ծեփսպիրի «Վենետիկի վաճառականը» ող-
բերգության հերոս հրեան, որ իր թղթի վրա հիմնված, ուզում է պար-
տատիրոջ մսից մի կտոր կտրել:—Սոսկալի վաշխառու» (էջ 262):

«Օթելլո. Ծեփսպիրի համանուն ողբերգության հերոսը, սևամորթ, խան-

գրատ, որը լսել կասկածից իր անմեղ կնոջը՝ Դեղպնմոնային սպանեց» (էջ 383):

«Յալստաֆ. Շեքսպիրի ստեղծած մի ծաղրական տիպար, անսպառ հումորվ, պարծենկոտ, բայց վախկոտ ծերուկ է» (էջ 390):

«Մավլ. Սևամորթ մի ցեղ Աֆրիկայի հյուսիս-արևելքում. այդպես անվանում են նաև նույն տեղի արաբներին» (էջ 225):

«Շեքսպիրովդիա. Գրականության այն ճյուղը, որ միայն Շեքսպիրով է զբաղվում» (էջ 263):

«To be or not to be, that is the question (անդլ. տու թի օն նոտ տու թի թես իս թի կվեսշեն), լինել, թե չլինել, այս է հարցը։ Շեքսպիրի Համետի խոսքերը նրան հոչակավոր մենախոսության սկզբում» (էջ 419):